



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1894
Հոկտեմբեր 28, 1994

Գերազնորի
Տ. Վաչե Արք. Յովսէփեան
Առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան Թեմին
Պատասխանատու Ազգային Եկեղեցական Ժողովի Կազմակերպման
Փաստինա.

Սիրելի Վաչե Սրբազան,

Ստացած ենք Կաթողիկոսական Տեղապահ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի
Հոկտեմբեր 10, 1994 թուակիր նամակը՝ որով ընդհանուր տեղեկութիւններ կը խնդրուէր մեր
թեմի կապակցութեամբ:

Ստորեւ հաճեցէք գտնել անհրաժեշտ տեղեկութիւնները.

Մեր թեմին անունն է՝ Հայաստանեայց Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան
Թեմ, որ հիմնուած է 1898 թուականին՝ օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան
Հայրիկի պաշտօնական Կոնդակով: Թեմը ունի 55 համայնքներ, որոնցմէ 12-ը՝ «միջըն»
համայնքներ են: Թեմի Հայաստանեայց Եկեղեցոյ պատկանող հաւատացեալներու մօտաւոր
թիւն է 600,000:

Կցեալ էջերուն վրայ հաճեցէք գտնել մեր թեմի եկեղեցիներուն եւ Հոգեւոր
Հովիւներուն անունները, հասցէներն ու հեռաձայնի թիւերը:

Եթէ յաւելեալ որեւէ տեղեկութեան կարիքը զգացուի՝ բարի եղէք հաղորդել մեզի:

Ցաջողութեան լաւագոյն մաղթանքներով

Խաժակ Արք. Պարսամեան
Առաջնորդ

Տիմ Ծախնեան
Ատենադպիր

Տիմ. Վիկարնթ Կիրախեան
Ատենապետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՉՄԻԱԾԻՆ
Տեղեփ: 243326 KREST SU
Ֆաքս: (78852) 151077
Հեռ. (78852) 288666
57-07 Կառ.

REPUBLIC OF ARMENIA
HOLY SEE OF ST. ETCHMIADZIN
Telex: 243326 KREST SU
Fax: (78852) 151077
Tel: (78852) 288666
57-07 Govern.

Թի _____

_____ 199 թ.

Փաստիճա, Մարտ 10, 1995

Արթուրյան Եղբայր,

Այսու լիազորում եմք յանուն Կաթողիկոսական Տեղապահ՝ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի անունով հաղորդելու ձեզի, թե Ապրիլ 1-ին, 1995, Շաբաթ առաւօտ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ տեղի պիտի ունենայ Եպիսկոպոսաց խորհրդակցական Ժողով:

Ուստի, գոհունակութեամբ կը հրաւիրենք ձեզ մասնակցելու սոյն ժողովին, որպէսզի բոլորս միասին ազատօրէն խորհրդակցինք կենսական կարգ մը հարցերու շուրջ: Վստահ ենք, ըստ այնմ կը կարգադրէք Մայր Աթոռ ձեր ժամանումը:

Մի քանի օրէն ձեզի պիտի դրկենք նախագիծ օրինակ մը "Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ Սահմանադրութիւն"ը, աշխատանքէն, որ մեր կողմէ համադրումն է 1945-ին, 1955-ին, 1958-ին եւ Երջանկայիշատակ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստեանի գլխաւորութեամբ կատարուած աշխատանքներուն եւ առաջարկութիւններուն հիման վրայ:

Ցառաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովին կը ներկայացնենք կատարուած աշխատանքը: Ժողովականները կրնան որոշել ներկայացուած Սահմանադրութեան կատարելագործումին, ապագային տարուելիք աշխատանքներուն, ինչպէս նաեւ վաւերացման մասին:

Որեւէ պարագային, խիստ անհրաժեշտ է, որ ամենայն լրջութեամբ նկատի առնենք այս հարցը՝ առաջը առնելու համար ներկայիս յարուցուած անորոշութիւններուն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ ձեզ անձամբ ողջունելու յոյսով,

Աղօթակից՝

ՎԱՋԷ ԵՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Պատասխանատու Ազգային-Եկեղեցական
Ժողովի Կազմակերպման